

ԱՄՓՈՓԱԳԻՐ

«ԵՐԿԻՐ ՄԵԴԻԱ» ՀԸ «ՎԻՎՏԱՇԻ ԱՐԿԱԾՆԵՐԸ» ՀԱՂՈՐԴԱՇԱՐԻ ԼԵԶՎԱԿԱՆ ՍԽԱԼՆԵՐԻ

Հաղորդման ձևաչափը պահանջում է, որ հաղորդավար Անաստասիա Վիվրաշը գործածի բանավոր, հաճախ էլ՝ բարբառային խոսքի տարրեր: Դա հասկանալի է, բայց պարզունակ խոսքի անվան տակ լեզվական սխալներ հեռարձակելը մերժելի երևույթ է:

Հաղորդավարը Յաղդան գյուղի բնակիչներից մեկին հարցնում է, թե ինչ է նշանակում գյուղի անունը: Բնակիչը չգիտի և չի պատասխանում հարցին: Հաղորդավարը շրջանցում է իր տված հարցը, քանի որ ինքն էլ չգիտի պատասխանը: Մինչդեռ, եթե որոշել էր այդ հարցը տալ, երկու թույլ էր պետք՝ Գուգլ համակարգում Յաղդան-ի նշանակությունը գտնելու համար: Սա հաղորդավարի՝ ընդհանուր առմամբ լեզվական անփույթ վերաբերմունքի դրսևորումն է:

Դուրս գրված սխալները միայն հաղորդավարի խոսքից են: Դրանք ներկայացնում ենք ըստ բնույթի խմբավորած:

Խոսակցական լեզվին հատուկ որոշ տարրեր համապատասխանեցրել ենք գրական հայերենին՝ առանց մեկնաբանելու:

Սխալ ձևակերպումներ

«Տիկին Լուիզա ջան, **հույսներդ** չկորցնեք» («Նորաշենում»):

Այսպես կարելի է ասել, երբ խոսքը մեկից ավելի մարդկանց է ուղղված: Բայց այստեղ հաղորդավարը մեկ մարդու հետ խոսում է հարգական Դուք-ով:

Ճիշտ է՝ «Տիկին Լուիզա ջան, **Ձեր հույսը** չկորցնեք»:

«Ասորական օրենսգրքի առաջ **հավասար էին թե՛ ժողովուրդը և թե՛ թագավորը**» («Ասորական համայնքում»):

Այս ձևակերպումը ճիշտ կլիներ, եթե ժողովուրդն ու թագավորը հավասար լինեին, առանձին-առանձին: Բայց նրանք օրենսգրքի առաջ իրա՛ր են հավասար:

Ուրեմն՝ «Ասորական օրենսգրքի առաջ **ժողովուրդն ու թագավորը հավասար էին**»:

«Այս անգամ մեր հաղորդումների շարքը լինելու է Հայաստանում ապրող ազգային **փոքրամասնության** մասին» («Եզդիական համայնքում»):

Խոսքը բոլոր փոքրամասնությունների մասին է:

Ուրեմն ճիշտ է՝ «Այս անգամ մեր հաղորդումների շարքը լինելու է Հայաստանում ապրող ազգային **փոքրամասնությունների** մասին»:

Կապի սխալ կիրառություն

«Անցած հաղորդմանը մեզ **մոպ** տոն էր» («Նորաշենում»):

Ճիշտ է՝ «Անցած հաղորդմանը **տոն էինք նշում**» կամ «Անցած հաղորդմանը **տոնական օր էր**»:

«Հույների **մոպ** երեխա ես ունենում, նո՛ր ամուսնանում» («Յաղդանում»):

Ճիշտ է՝ «Հույները երեխա են ունենում, նո՛ր ամուսնանում»:

«Հաղորդավար- Գիտե՞ք, ձեր **մոպ** ասեցին, որ ես տունը մնացած եմ:

Եզդի կին- Մեր **մո՛պ**:

Հաղորդավար- Հա՛, ձեր ժողովուրդը **ասեց**» («Եզդիական համայնքում»):

Եզդի կինը չի հասկանում, թե հաղորդավարն ինչ իմաստով է ասում **ձեր մոպ**:

Նաև՝ ոչ թե **ասեց**, այլ **ասաց**:

Ճիշտ է՝ «Հաղորդավար- Գիտե՞ք, ձեր **ժողովուրդն ասաց**, որ ես տունը (տանը) մնացած եմ»:

Օտարաբանություններ

«Շատ **մերսի** մեր մշակույթը պահպանելու համար» («Նորաշենում»):

Ճիշտ է՝ «Շատ **շնորհակալություն** մեր մշակույթը պահպանելու համար»:

«Էս **պաղառքը**՝ Ձեզ» («Նորաշենում»):

Ճիշտ է՝ «Այս **նվերը**՝ Ձեզ»:

«Կարող են մեզ հետ **կապնվել** այս **մեյլով**» («Թորոսգյուղում»):

Այստեղ սխալ է նաև **կապնվել**-ը: Ավելորդ **ն**-ով տարածված բառեր կան մեր խոսքում (**ճանանչել, ավելնորդ** ևն): Սա դրանցից մեկն է:

Ճիշտ է՝ «Կարող են մեզ հետ **կապվել** այս **էլեկտրոնային փոստով/էլհասցեով**»:

«Հաղորդավար- **Ո՞նց ա** Ձեր անուն-ազգանունը:

Տարեց ապարանցի- Հը՞:

Հաղորդավար- **Ինչպե՞ս ա** Ձեր անուն-ազգանունը» («Ապարանում»):

Երբ տարեց ապարանցին չի հասկանում, թե ինչ է հարցնում հաղորդավարը, վերջինս «ճշտում է» իր հարցը: Այս օտարաբան հարցումը հաղորդաշարում հաճախ է կրկնվում:

Ճիշտ է՝ «**Ի՞նչ է** Ձեր անուն-ազգանունը»:

«Որ լուրիկը էդքան համով ա, գաղտնիքն **ինչո՞ւմ ա**» («Ասորական համայնքում»):

Ճիշտ է՝ «Որ լուրիկը այդքան համով է, գաղտնիքը **ո՞րն է**» կամ «**Ո՞րն է** գաղտնիքը, որ լուրիկն այդքան համով է»:

«**Իրա** (ավանդույթի) նշանակությունը **ինչո՞ւմն է**» («Եզդիական համայնքում»):

Նաև՝ ավանդույթի մասին պետք է ոչ թե *իրա* (*իր*) դերանունը գործածել, այլ *դրա*:

Ճիշտ է՝ «**Դրա** նշանակությունը **ո՞րն է**» կամ «**Ո՞րն է դրա** նշանակությունը»:

(«Որպեսզի» շաղկապի սխալ գործածության դեպքեր)

«Կխնդրեմ, **որպեսզի** բաժանորդագրվեք» («Թորոսգյուղում»):

Որպեսզի շաղկապով կապվում են նպատակի պարագա երկրորդական նախադասությունները:

Ճիշտ է՝ «Կխնդրեմ, **որ** բաժանորդագրվեք»:

«Խորհուրդ եմ տալիս, **որպեսզի** գաք ձեր մազերը կտրելու» (Գյումրիում):

Ճիշտ է՝ «Խորհուրդ եմ տալիս, **որ** գաք ձեր մազերը կտրելու» կամ «Խորհուրդ եմ տալիս՝ գաք ձեր մազերը կտրելու»:

«Խնդրում եմ, **որպեսզի** մեկնաբանությունների բաժնում գրեք» («Ասորական համայնքում»):

Ճիշտ է՝ «Խնդրում եմ, **որ** մեկնաբանությունների բաժնում գրեք»:

«**Գաղափարը նրանում է, որպեսզի եզդի ազգը իրենով փարածվի**» («Եզդիական համայնքում»):

Նաև՝ ոչ թե նրանում է, այլ այն է: Նախընտրել է՝ ոչ թե գաղափարը, այլ իմաստը կամ նշանակությունը: Իսկ ի՞նչ է նշանակում «եզդի ազգը իրենով տարածվի»: Ըստ համատեքստի՝ խոսքը փակ համայնք մնալուն է վերաբերում:

Ճիշտ է, օրինակ՝ **«Իմաստն այն է, որ եզդի ազգը չծուլվի»**:

Թվային անհամաձայնություն

«Երևո՞ւմ **ա թիկնեղ ուսերս**» («Թորոսգյուղում»):

Նաև՝ ուսերը թիկնեղ չեն լինում: Կարող են լինել, օրինակ, *ամուր*:

Ճիշտ է՝ «Երևո՞ւմ **են ամուր/մարզված ուսերս**»: Ճիշտ կլիներ նաև՝ «Երևո՞ւմ **է, որ թիկնեղ** եմ» (այս դեպքում եզակի թիվը՝ *երևում է*, ճիշտ կլիներ):

«Էս ի՞նչ սիրուն **պատվոգրեր ա**» («Թորոսգյուղում»):

Ճիշտ է՝ «Էս ի՞նչ սիրուն **պատվոգրեր են**»:

«**Հավասարվեց մազերս**» (Գյումրիում):

Ճիշտ է՝ «**Հավասարվեցին մազերս**»:

«Էստեղ **ընդունված ա, չէ՞, շուր ամուսնությունները**» («Եզդիական համայնքում»):

Այստեղ սխալ է նաև *շուր ամուսնությունները* արտահայտությունը:

Ճիշտ է՝ «Այստեղ **ընդունված են, չէ՞, վաղ ամուսնությունները**» Ճիշտ կլիներ նաև՝ «Այստեղ **ընդունված է, չէ՞, շուր ամուսնանալը**» (այս դեպքում եզակի թիվը՝ *ընդունված է*, ճիշտ կլիներ):

«Էս **ավրոները շապ ա** ձեր գյուղում» («Ասորական համայնքում»):

Ճիշտ է՝ «Այս **ավրոները** (նախընտրելի է՝ *մեքենաները, ավրոմեքենաները*) **շապ են** ձեր գյուղում»:

«Ասորիների մշակույթը **այդքան էլ** չի տարբերվում հայկական մշակույթից, սակայն նրանց **պարը, երգը, լեզուն շարունակվում է** ուսուցանվել թե՛ դպրոցներում...» («Ասորական համայնքում»):

Նաև՝ ոչ թե *այդքան էլ*, այլ *այնքան էլ* (քարացած արտահայտություն է):

Ճիշտ է՝ «Ասորիների մշակույթը **այնքան էլ** չի տարբերվում հայկական մշակույթից, սակայն նրանց **պարը, երգը, լեզուն շարունակվում են** ուսուցանվել թե՛ դպրոցներում...»:

Սխալ բառաձևեր

«**Մենակով** չեմ վառել» («Թորոսգյուղում»):

Վերջին տարիներին տարածված սխալներից է:

Ճիշտ է՝ «**Մենակ** չեմ վառել»:

«Հողը **մենակով** ե՞ք մշակում» («Ասորական համայնքում»):

Ճիշտ է՝ «Հողը **մենա՛կ** եք մշակում»:

«Պարանի փոխարեն ժայռի **բարձրունքից** կախում է իր երկար վարսերը»
(«Ջերմուկում»):

Տարածված սխալ է:

Ճիշտ է՝ «Պարանի փոխարեն ժայռի **բարձունքից** կախում է իր երկար վարսերը»:

Ավելորդաբանություն

«Համոզված եմ, որ **կրկին կվերադառնամ** էստեղ» («Ասորական համայնքում»):

Վերադառնալ բառի մեջ *կրկին*-ի իմաստը կա:

Ուստի՝ «Համոզված եմ, որ **կրկին կգամ** այստեղ» կամ «Համոզված եմ, որ **կվերադառնամ** այստեղ»:

«Հենց էստեղ է, որ մարդն ու բնությունը **առյերեսվում են իրար հեպ**»:

Նաև՝ նշված առաջին բառը արտասանվում է **առէրեսվում են: Իրար հեպ**-ն ավելորդ է, քանի որ *առերեսվել*-ու մեջ *իրար հեպ*-ի իմաստը կա:

Ճիշտ է՝ «Հենց այստեղ է, որ մարդն ու բնությունը **առերեսվում (առէրեսվում) են**»:

Արքասանական սխալներ

«Ի՛նչ **ռոմանծիկ** էր» («Ասորական համայնքում»):

Ճիշտ է՝ «Ի՛նչ **ռոմանտիկ** էր»:

«**Սրեսցյուն**» (մի քանի հաղորդման ժամանակ):

Ճիշտ է՝ «**Ցրեսություն**»:

«Գրիգոր Լուսավորչի և **Տրդատ Գ**-ի կառուցած...» («Օձունում»):

Նշված ձևով գրում ենք (Վազգեն Ա, Տիգրան Բ և այլն), բայց այդպես արտասանելը սխալ է (կարդում ենք՝ Վազգեն Առաջին, Տիգրան Երկրորդ և այլն):

Ճիշտ է՝ «Գրիգոր Լուսավորչի և **Տրդատ Երրորդի**-ի կառուցած...»:

Լեզվական վերահսկողության բաժնի գլխավոր մասնագետ՝

Երազիկ Գրիգորյան